Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2020 թվականի բյուջետային հայտի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով յուրաքանչուր տարվա համար նախատեսվել է 610,0 հազար դրամ՝ քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքի մասնագիտացում ունեցող պետական ծառայողների վերապատրաստման համար: Յուրաքանչյուր խմբում ունկնդիրների քանակը (առավելագույնը՝ 30 ունկնդիր) որոշվում է վերապատրաստման դասընթացների կազմակերպման ժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան պարտադիր վերապատրաստման ենթակա պետական ծառայողների թվից կախված:

Յուրաքանչյուր մասնագիտական խմբի համար նախատեսվել է 30 ակադեմիական ժամ (30 ժամ x 3 խումբ x 6.000 դրամ) և վերապատրաստման արդյունքների գնահատում 3 խմբի համար՝ 60.000 դրամ, այլ ծախսեր՝ 10.000 դրամ:

Ինչ վերաբերում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հաստիքների ավելացմանը և կառուցվածքային փոփոխություններին, այդ առնչությամբ հայտնում ենք, որ 2018 թվականին Սահմանադրական օրենքում կատարված լրացումներով Պաշտպանին վերապահվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության նոր կոնվենցիոն կարգավիճակ:

Այս օրենսդրական փոփոխությամբ, ինչպես նաև Պաշտպանին ներկայացվող դիմում-բողոքների էական աճով պայմանավորված ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 214-Ա որոշման համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հաստիքների թիվն ավելացել է 9-ով:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 706-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 908-Ա որոշման համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հաստիքների թիվն ավելացել է ևս 3-ով (Տավուշում մարզային ստորաբաժանում ստեղծելու նպատակով):

Վերոգրյալից բացի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2020 թվականի բյուջետային հայտով ներկայացվել է ևս 4 հաստիքային միավորի ավելացում՝ հաշվի առնելով աշխատակազմի գերծանրաբեռնված աշխատանքը:

Հաստիքային միավորների ինչպես կատարված, այնպես էլ նախատեսվող ավելացումները չեն առաջացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման գծով ծախսերի ավելացում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերապատրաստման ծառայությունների գծով ծախսերի չափը կախված է վերապատրաստման խմբերի (յուրաքանչյուր խմբում՝ առավելագույնը 30 ունկնդիր) և վերապատրաստման ժամերի քանակից:

2020 թվականին նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին նախատեսվում է ձեռք բերել համակարգչային տեխնիկա՝ պայմանավորված

հաստիքային միավորների նախատեսվող ավելացմամբ և շահագործման համար ոչ պիտանի տեխնիկան նորով փոխարինելու անհրաժեշտությամբ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2020 թվականի բյուջետային հայտը հրապարակված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքում: